Եւ Դշի (4 Փեբր.). քիւրէկն հանեցին։

Եշի (5 Փեբր.). Մինաս վարդապետն եկաւ։

Ուրբաթի օրս (6 Փեբր.) պատրիգն Հռոմոց մտեալ ընդ փաշան, տեսեալ զգործս յառաջմանէ. և օրս վէզիրն խիլայեաց զնա և զորս ընդ նմա՝ կապայ զգեցուցանելով, և Բ թղթիւք եկ ի տանէ վէզիրին և ոչ գիտացաք թէ զի՛նչ էր ի թղթին։

Շաբաթս 7 (Փեբր.) նանձրև էր։

Կիրակի (8 Փեբր.). զիշերիս բազում մարդիք սպանեալ էին յԱթմէյտանն։ Որ Բարեկենդան ասի մեծ, ի Մղտեսոնցն էաք։ Աւուրքս և յամենայն օր վէզիրն ի շուրջ գայր և եթէ ոք հանդիպէր նմա անդ՝ զնոսին սպանանէր, և եթէ յոյր տեղ մի ձայն ելանէր բարձր և կամ արք ոմանք ի մի տեղ հաւաքեալ՝ մըտանէր անդ, զոմանս դանեալ և զոմանս սպանեալ և զոմանս հնարիւք կորուսանէր կամ ի ծովն ձգէր. և ի զիշերն էր շուրջ գալն նորա, և երթայր յՈւսկիւտարն եւ յամենայն սահմանս նորա, եւ ծովեզերիս զղահվէխանէքն կործանեալ, և զորս գտանէր ի միատեղ եկեալ՝ սպանանէր։ Եւ յաւուրս եղեալ հարկ ի վերայ Սառաճխանի եղեալ արուեստաւորացն Տաճկաց, զի տացեն սուրսէթ, այս է՝ զին յարդի և գարւոյ, վասն պատերազմին իւրեանց. և նոքա ի մի վայր հաւաքեալ նշանաւոր արանցն և խորհուրդ արարեալ զի փակեսցեն զամենայն խանութս և զշուկայս քաղաքիս և ի մի վայր գումարեալ մտցեն ի թագաւորն գանկատ ի ձեռանէ նորին։ Այլ ոմանք ոչ կամեցեալ զայս՝ գտեալ զմի էմիր զոմն անուանի, զնա ուղարկեալ առ վէզիրն թէ Մեք ունիմք զիր ի թագաւորէն վասն ոչ տալոյ զայսպիսի հարկս։ Եւ նա առեալ զխէթիշէրիֆն և գնացեալ մօտ առ վէզիրն, և զառաջինն խօսս ասացեալ վէզիրն թէ ունիք դուք զիր ի թագաւորէն՝ տո՛ւք ինձ անպատճառ. և նա ասէ թէ Զայն